ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

2 (15), 2007

ՀՏԴ 802.0/809.198.1 *Անգլերեն լեզու*

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴԵՊՔԵՐ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ն.Մ.Գրիգորյան

Բայն ունի դիմավոր (finite) և անդեմ(non-finite) ձևեր. վերջինս կոչվում է դերբայ, որը չունի դեմք, թիվ կամ եղանակ և չի կարող նախադասության մեջ հանդես գալ որպես ստորոգյալ: Անգլերենում գոյություն ունեն երեք դերբայներ՝ ածական դերբայ(participle), գերունդիում(gerund) և անորոշ դերբայ (infinitive): Հայերենի դերբայների հետ համեմատելով՝ participle-ը համապատասխանում է հայերենի հարակատար դերբային, gerund-ը համակատար դերբային:

Ըստ Էդվարդ Աղայանի,Գուրգեն Սևակի, Մերգեյ Աբրահամյանի հայերենի քերականության մեջ գոյություն ունի ութ դերբայ՝ անորոշ (ել, ալ), ենթակայական(ող, ացող), հարակատար (ած,ացած), համակատար (ելիս,ալիս), անկատար (ում), վաղակատար (ելՄացել), ապակատար (ելու, ալու), ժխտական (ի, ա), մինչդեռ Ֆ.Հ. Իլդարթանը պնդում է, անորոշ, հարակատար, համակատար և ենթակայական դերբայների առկայությունը հայերենում, իսկ մնացածը համարում ձևաբայեր՝ անկատար ձևաբայ,վաղակատար ձևաբայ, ժխտական ձևաբայ և ապակատար ձևաբայ:

Անգլերենում անորոշ դերբայը (infinitive) հիմնականում պայմանավորված է to մասնիկով:Ըստ Գորդոնի և Լյոիլովայի ինֆինիտիվը պարզ բայ է, որը հաչորդում է չշեշտված մասնիկին՝ to-ին:Պարզ ձևի հետ ինֆինիտիվը ունի հետևյալ վերլուծական ձևերը՝

Continuous-to be taking

Perfect-to have taken

Perfect cont.-to have been taking

Simple passive-to be taken

Perfect passive-to have been taken

Հայերենում այն ունի **են, ալ** վերջավորությունները և պատասխանում է ի՞նչ անել, ի՞նչ լինել հարցերին: Անորոշ դերբայը օժանդակ բայի հետ դիմավոր ձևեր չի կազմում, այն հոգնակի թիվ չունի: Հայերենի անորոշ դերբայը նախադասության մեջ լինում է ենթակա, ստորոգյալ կազմող բառ,լրացում: Օրինակ՝ Մի անգամ **տենդելը** (ենթակա) հազար անգամ **խելոց** (լրացում) **լավ** է: Եթե ես այսպես տարվա մեջ քիչ բան եմ գրել, պատճառը շատ կարդալն է. (ստորոգյալ կազմող բառ):

Ծունչ-փուչ աղջիկներ սարերը ելան՝

Վիճակ հանելու աշխույժ երգերով (Հ.Թ.)

Վիճակ հանելու-բայական անդամի լրացում:

Անգլերենում անորոշ դերբայը(infinitive), ինչպես ածական դերբայը(participle) և գերունդիումը(gerund) կարող է լինել առվանական և բայական:

Անվանական տեսակետից ինֆինիտիվը կարող է օգտագործվել որպես՝

ա.ենթակա(subject) նախադասության մեջ.

Օրինակ՝To go on like **this** was dangerous.(Galsworthy)

Այսպես շարունակելը վտանգավոր էր:

բ.ստորոգելիական վերադիր (predicative)

Օրինակ՝Her plan was now **to drive to Bath during the night**.

Նրա ծրագիրը հիմա **գիշերվա ընթացքում Բաթ մեկնելն** է:

գ.որպես խնդիր(object)

Օրինակ՝ I have never learnt **to read or write**.

Ես երբեք **գրել, կարդալ** չեմ սովորել:

Բայական տեսակետից

ա. անցողական բայերի ինֆինիտիվը կարող է հանդես գալ որպես ուղիղ խնդիր(direct objec).

Օրինակ՝ He… began to **feel some curiosity**…(Eliot)

Նա…**սկսեց հետաքրքրություն զգալ**…

բ.անորոշ դերբայը կարող է լրացվել մակբայով (adverb).

Օրինակ՝I cannot **write** so **quickly**.

Ես չեմ կարող այդպես **արագ գրել**:

գ.ինֆինիտիվը ենթարկվում է ժամանակի և կերպի առանձնահատկություններին (tense and aspect distinction):

Ժամանակակից անգլերենում անորոշ դերբայը ունի հետևյալ ձևերը՝

	Active	Passive
Indefinite	To write	To be written
Continious	To be writing	-----
Perfect	To have written	To have been writing
Perfect Continious	To have been writing	----

Ի տարբերություն մնացած դերբայների՝ անորոշ դերբայի ժամանակային առանձնահատկությունը հարաբերական է:

1.Ինֆինիտիվի անորոշ ձևը ցույց է տալիս գործողություն, որը տեղի է ունեցել միաժամանակ դիմավոր բայի արտահայտած գործողության հետ, այնպես, որ այն կարող է առնչվել ներկային, անցյալին կամ ապագային.

Օրինակ՝ I am glad to meet you.(Dreiser)

I was glad to see Mr. Paul.(Ch.Bronte)

Mr.Forsyte will be very glad to see you.(Galsworthy)

2.ինֆինիտիվի շարունակական ձևը(continious) նույնպես առնչվում է գործողությանը, որը տեղի է ունեցել դիմավոր բայի արտահայտած գործողության հետ միաժամանակ:Այս դեպքում այն ընթացքի մեջ եղող գործողություն է..

Օրինակ՝They happened, at the moment, to be standing near a small conservatory at the end of the garden.(Collins)

3.Ինֆինիտիվի անցյալ կատարյալ (Perfect Infinitive) ձևը ցույց է տալիս գործողություն, որը տեղի է ունեցել դիմավոր բայի արտահայտած գործողությունից առաջ.

Օրինակ՝ "I am glad to have seen you", he said.

«Ուրախ եմ, որ ձեզ տեսա»,- ասաց նա:

An intimate friend is said to have dined with him that day.

Ասում են, որ այդ օրը նրա մոտ ճաշել էր մոտիկ ընկերը:

4.Ինֆինիտիվի անցյալ շարունակական (Perfect Continuous Infinitive) ձևը ցույց է տալիս գործողություն, որը շարունակվել էր մի ժամանակում՝ նախորդելով դիմավոր բայի ցույց տված գործողությանը:

Օրինակ՝For about ten days we seemed to have been leaving on nothing but cold meat, cake and jam. (Jerome)

Թվում էր, որ տասը օր մենք ապրում էինք միայն սառը մսով, թխվածքաբլիթներով և մուրաբայով:

Անցողական բայերի անորոշ դերբայն ունի հատուկ ձևեր ներգործական(Active voice) և կրավորական (Passive voice) սեռերի համար.

Օրինակ՝It is glorious to love and to be loved…

Այնպես հիանալի է սիրել և սիրվել…

Եթե նախադասության մեջ առկա է, there is կառուցվածքը, ապա որոշ բայերի ինֆինիտիվը կարող է լինել ներգործական(Active) կամ կրավորական (Passive)՝ առանց իմաստը փոխելու.

Օրինակ՝There is no time to lose.(Dreiser)

There is no time to be lost.(Eliot)

There is nothing to fear (to be feared).

Այս տեսակի նախադասությունները հայերենում ունեն թարգմանության միայն մեկ ձև՝

Ժամանակ չկա կորցնելու:

Վախենալու ոչինչ չկա:

Ժամանակակից անգլերենում անորոշ դերբայը(Infinitive) հիմնականում գործածվում է to մասնիկով: Ըստ Վ.Լ. Կասուշանսկայայի հին անգլերենում to համարվում էր նախդիր, որը ինֆինիտիվի հետ գործածության ժամանակ ցույց էր տալիս նպատակ, այսինքն to writtene նշանակում էր «տրպեսգի գրի» կամ «գրելու նպատակով»: Հետագայում այն դարձել է ինֆինիտիվի անբաժան մասնիկը: Մինչդեռ կան դեպքեր, երբ ինֆինիտիվը գործածվում է առանց to մասնիկի, այն կոչում են bare infinitive: Դա հնարավոր է լինում՝

1.օժանդակ բայերից հետո.

Օրինակ՝I don't understand the meaning of this passage.

Ես այս հատվածը չեմ հասկանում:

2.Մոդալ բայերից (modal verbs) հետո,բացի ought բայից,բանի որ այն ունի պարտավորված ներկայու իմաստը և միշտ հանդես է գալիս to մասնիկով (ought to):

Օրինակ՝If one cannot **have** what one loves, one must **love** what one has.(Wilson)

Եթե չես կարող **ունենալ** ինչ սիրում ես, ապա պետք է **սիրել** այն ինչ ունես:

3.Ակամայի բայերից հետո, որոնք գույց են տալիս զգացմունք, ինչպես օրինակ to hear(լսել),to see(տեսնել), to feel(զգալ) և այլն.

Օրինակ՝In a few minutes they **heard** him **ascend** the ladder to his own room.(Hardy)

Մի բանի րոպեից նրանք **լսեցին**, թե ինչպես նա աստիճաններով **բարձրացավ** իր սենյակը:

Հայերենում այս նախադասության մեջ «բարձրացավ»-ը ոչ թե անորոշ դերբայ է,, այլ սահմանական եղանակ, անցյալ կատարյալ ժամանակ:

I never saw you **look** so before.(Hardy)

Ես երբեք քեզ այդպես զեղեցիկ չեմ տեսել:

I felt **my** heart jump.(Heym)

Ես զգացի, թե ինչպես **թրթռաց** իմ սիրտը:

Թրթռաց-սահմանական եղանակ, անցյալ կատարյալ ժամանակ:

4.To let(թույլ տալ) բայից հետո.

Օրինակ՝ Let us walk along this sidewalk.

Արի բայլենք այս մայթով:

«Բայլենք»-ը այս նախադասության մեջ հանդես է գալիս ոչ թե որպես ինֆինիտիվ, այլ որպես հրամայական եղանակ, ապառնի ժամանակ:

5.To make, to have բայերից հետո, միայն այն դեպքում, երբ դրանք ունեն ստիպել, թույլ տալ, հարկադրել իմաստները:

Օրինակ՝What makes you **think** so?

Ի՞նչն է, քեզ ստիպում **այդպես մտածել**:

I…had them take my baggage.

Ես…կարգադրեցի նրանց **վերցնել** ճամպրուկներս:

6.To know(իմանալ) բայից հետո, միայն այն դեպքում, երբ նրա իմաստը նմանվում է տեսնել (to see), գնել (to observe) բայերի իմաստին.

Օրինակ՝ I have so often known a change of medicine **work** wonders.

Ես շատ հաճախ եմ նկատել, որ դեղերի փոփոխությունը հրաշքներ է գործում:

Այստեղ «գործում է» սահմանական եղանակ, ներկա ժամանակ է:

Նման դեպքերում երբեմն to մասնիկը օգտագործվում է.

Օրինակ՝I have never known her to **weep** before.

Ես նախկինում երբեք չեմ տեսել նրան **լացելիս**:

Լացելիս-համակատար դերբայ:

7.To bid(հրամայել) բայից հետո.

Օրինակ՝I bowed and waited, thinking she would bid me take a seat (E.Bronte)

Ես խոնարհվեցի և սպասեցի՝ մտածելով, որ նա կհրամայի **ինձ նստել**:

8.Had better, would rather, would sooner, cannot but, nothing but, cannot choose but արտահայտություններից հետո;

Օրինակ՝ You had better go to bed and leave the patient to me. (Show)

Ավելի լավ է **գնար քնելու** և **թողներ** հիվանդին իմ հսկողության տակ:

Հայերեն նախադասության մեջ «քնելու» ապակատար դերբայ է, իսկ «թողներ»՝ ըղձական ապառնի:

I would rather not **speak** upon the subject.(Hardy)

Ես կնախընտրեի **չխոսել** այդ մասին:

I would sooner **die** here, at your feet…than see you married to such a one as that.(Trollope)

Ես ավելի շուտ **կմեռնեի** այստեղ՝ քո ոտքերի առաջ…քան տեսնել քեզ ամուսնացած նման մեկի հետ:

Կմեռնեի- ենթադրական անցյալ:

I cannot but **think** so.(Trollope)

Ես չեմ կարող այդպես **չմտածել**:

9.Հատուկ ձևի նախադասություններում(infinitive sentences) սկսելով why (ինչու) բառով.

Օրինակ՝ Why not come and **talk** to her yourself?

Ինչու՞ չմտնել և **չխոսել**:

Հայերեն նման թարգմանության մեջ «չմտնել և չխոսել» բայերը անորոշ դերբայներ են, իսկ եթե ավելացնենք «ինքներդ» բառը՝ «Իսչու՞ ինքներդ չմտնեք և չխոսեք», ապա «չմտնեք և չխոսեք» բայերը խոնարհված են:

Եվ մասնիկը հաճախ օգտագործում են առանց infinitive-ի, եթե այն կոնտեքստից հասկանալի է:

Օրինակ՝ He and his three men could not defend Rollingen even if they wanted to. (Heym)

Նա և նրա երեք ընկերները չէին կարող գրավել Ռոլինգենը, եթե նույնիսկ ցանկանային:

Եվ մասնիկը կարող է բաժանված լինել infinitive-ից մակբայով, այն անվանում են split infinitive(բառացիորեն ճեղքված կամ պառակտված infinitive).

Օրինակ՝ He was unable, however, to long keep silence.

Ամեն դեպքում նա ի վիճակի չէր երկար լռել:

Infinitive-ի դերը նախադասության մեջ:

Նախադասության մեջ infinitive-ը միայնակ հազվադեպ է հանդես գալիս: Շատ դեպքերում հանդիպում ենք անորոշ դերբայով կազմված արտահայտությունների, այսինքն՝ infinitive-ը հանդես է գալիս մեկ կամ մի քանի օժանդակող բառերով՝

1.Infinitive-ը որպես ենթակա.

Օրինակ՝ To doubt, under the circumstances, is almost to insult.(Ch.Bronte)

Դեռևս պայմաններում կասկածելը գրեթե վիրավորական է:

Even to think of it gave him ineffable torture.(Bennett)

Նույնիսկ դրա մասին մտածելը նրան անբացատրելի տառապանք պատճառեց:

Անգլերենում կան նախադասություններ, որոնք սկսվում են it ցուցական դերանունով և հանդես են գալիս որպես ենթակա (subject) .

Օրինակ՝ It is useless to discuss the question.(Eliot)

Անիմաստ է քննարկել այդ հարցը:

Հայերեն նախադասության մեջ ենթական դառնում է «վարզը»:

It was pleasant to be driving a car again.(Braine)

Հաճելի էր կրկին մերենա վարելը:

Հայերեն նախադասության մեջ ենթական «վարելը»է:

2.Infinitive-ը որպես ստորոգելիական վերադիր(predicative).

Օրինակ՝ My intention is to get into parliament.

Իմ նպատակը պառլամենտ մտնելն է:

Infinitive-ը կարող է օգտագործվել որպես ստորոգելիական վերադրի մաս.

Օրինակ՝ The abode of Mrs. Betty was not easy to find.(Dickens)

Տիկին Բեթիի կացարանը դժվար չէր գտնել:

3.Infinitive-ը որպես բարդ բայական ստորոգյալի (compound verbal predicate) մաս՝

ա.Մոդալ բայերի, մոդալ արտահայտությունների և մոդալության արտահայտող բայերի հետ infinitive-ը կազմում է բարդ բայական ստորոգյալի մաս.

Օրինակ՝ We must not leave him by himself any longer. (Dickens)

Մենք այլևս նրան միայնակ չպիտի թողնենք:

The train was to leave at midnight. (Hemingway)

Գնացքը պետք է մեկներ գիշերը:

բ.Սկիզբ, ընթացք կամ գործողության վերջ ցույց տվող բայերի հետ infinitive-ը կազմում է բարդ բայական ասպեկտային ստորոգյալ(compond verbal aspect predicate) (նման ստորոգյալ տեսակը հատուկ է միայն անգլերենին).

Օրինակ՝ Imprisonment began to tell upon him. (Dickens)

Ձերբակալումը սկսեց անդրադառնալ նրա վրա:

Before daylight it started to drizzle. (Hemingway)

Լուսաբացից առաջ սկսեց անձրև մաղել:

4.Infinitive-ը որպես խնդիր.

Օրինակ՝ Leila had learned to dance at boarding school.(Mansfield)

Լեյլան պարելը սովորեց գիշերօթիկ դպրոցում:

To allow (թույլ տալ), to order (հրամայել), to ask (խնդրել), to beg (խնդրել), to request (պահանջել), to teach (ուսուցանել), to instruct (դասավանդել) բայերից հետո կարող է հայտնվել երկու խնդիր, որից մեկը արտահայտված է infinitive-ով.

Օրինակ՝ He asked me to walk in.(Collins)

Նա ինձ հրավիրեց ներս մտնել:

Հայերեն նախադասության մեջ «ինձ» հանգման անուղղակի խնդիր է, «մեջս մտնել»՝ ուղիղ խնդիր:

5.Ենթինիտիվը որպես complex object-ի մաս.

Օրինակ՝ I never saw you **act** this way before.

Ես երբեք չեմ տեսել քեզ այդպես **վարվելիս**: (վարվելիս՝ հասակառար դերբայ).

6.Ենթինիտիվը որպես որոշիչ (attribute): Անգլերենում այն կարող է գոյց տալ աբստրակտ և դասակարգված գոյականներ(abstract and class nouns), անորոշ դերանուններ(somebody,something, anybody, anything), դասական թվականներ (ordinal numerals) և last ածական:

Օրինակ՝ I have not had time **to examine this room yet**. (Conan Doyle)

Ես ժամանակ չունեի **զննելու այս սենյակը**:

Այստեղ «զննելու» դառնում է բայական անդամի լրացում:

I have nobody **to say a kind word to me**.

Ես ոչ մեկը չունեմ,որն ինձ մի բարի խոսք ասեր:

Ասեր-ըղձական եղանակի անցյալ ժամանակ, խոսք ասեր-ստորոգյալ:

7.Ենթինիտիվը որպես միջանկյալ բառ(parenthesis).

Օրինակ՝ Well, **to cut a long story short**, they thought it would be interesting to make a show.

Լավը **ասած**,կարճագ թվում էր, որ տնաարանի պատը ավելի հետաքրքիր կլիներ:

He was rude, **to say the least of it**.

Կարճ **ասած**,նա կոպիտ էր:

Հզկու նախադասություններում «ասած»-ը հարակատար դերբայ է:

Ս.Աբրահամյանը հայերենում նախադասության մեջ անորոշ դերբայի առկայությունը սահմանափակում է անդեմ նախադասությամբ: Ըստ նրա տեսակետի անդեմ կոչվում է այն միակազմ նախադասությունը, որը չունի ընդունվածական դեր, սա՝ նշանակում է, որ նրա կազմությանը չեն մասնակցում բայի դիմավոր ձևերը, այդ թվում նաև օժանդակ բայը կամ հանգույցը:

Անդեմ նախադասությունները իրենց կազմությամբ միատեսակ չեն, նայած թե անդեմ նախադասության գլխավոր անդամը ինչ խոսքի մասով է արտահայտվում, ըստ այդմ այն կոչվում է բայական կամ անվանական:

Բայական նախադասություններն են՝ Հանգստացնել գլուղը (Դ.Դ.): Բարձրացնել աշխատանքային կարգապահություն: Այդպիսի նախադասությունների գերադաս անդամը սովորաբար արտահայտվում է անորոշ դերբայով: Բայական միակազմ նախադասությամբ արտահայտում է գործողության կատարված լինելը, կատարելու անհրաժեշտությունը, հարցում,հրաման կատարելու մասին և այլն:

Հմմտ. Որեմն բռնակա՞ դաժանայ: **Փակե՞լ** Մեկնայային տանը, **գոռա՞լ**, հայհոյե՞լ, **ծեծե՞լ** (Շիրվ.): Հավարել գնդացիրները (Ռ.Հ.):

Անդեմ նախադասությունները սովորաբար լինում են պարզ, ըստ որում՝ պարզ հասառտ և պարզ ընդարձակ:Պարզ հասառտ անդեմ նախադասությունները կազմված են լինում միայն մեկ անդամից.

Օրինակ՝ **Դաժանվե՞լ** (Շիրվ.), **Լռել** (Դ.Դ.):

Պարզ ընդարձակ անդեմ նախադասությունները բաղկացած են լինում մեկ գլխավոր անդամից և լրացումներից.

Օրինակ՝ **Ու՞ր գնալ** (Շիրվ.), **Բայց ինչու՞ հուզվել** (Շիրվ.)

Բայական անդեմ միակազմ նախադասությունների գերադաս անդամը սովորաբար արտահայտվում է անորոշ դերբայով: Բայական անդեմ միակազմ նախադասությունները արտահայտում են հրաման, կարգադրություն, գուցում, որոնցով պահանջվում է կատարել որևէ գործողություն կամ որով արգելվում է գործողության կատարումը.

Օրինակ՝ **Պահել** այս ռազմակարգը, **չշփոթվել** իր՝ վարդանի շարժումներից,**կոտորել** թյորին...ողջ **չթողնել** ոչ մեկին:Պահակները **դնել**, դուռը **փակել**, և **փախչել** ցանկացողին **սատակել** անմիջապես:

Այդպիսի նախադասությունները իրենց բնույթով մտնում են հրամայական նախադասությունների շարքը,բայց, ինչպես պնդում է Ս.Աբրահամյանը, չունեն այն յայն. բազմապիսի կիրառություններ, ինչ որ դիմավոր բայով արտահայտված հրամայական նախադասությունները:

Անդեմ բայական նախադասությունները կարող են արտահայտել նաև ցանկություն, առաջարկություն, կոչ.

Օրինակ՝ **Հրատարակել** սամանագիտական բառարաններ, այդ թվում՝ առնտրացանցի աշխատողների համար:

Քննարկվող տիպի նախադասությունները հարցական ինչերանգով գործածվելով արտահայտում են հարցում տարբեր նպատակներով:

Ավելի հաճախ նրանք հարցական երանգով գործածվում են այս կամ այն գործողությունը կատարելու վերաբերյալ երկմտություն, կասկածանք, երկընտրանք և նման այլ վերաբերմունք արտահայտելու համար.

Օրինակ՝ Որի՞ն մոտենամ, որի՞ հետ ծուլվել առմիշտ, ո՞րն է բարվոքը-չգրկվել հարուստ տնից, մնալ հավատարիմ տեսականին և անգե՞ն, թե՞ լինել հարուստ, զորավոր, ինքնիշխան (Շիրվ.):

Ս.Աբրահամյանի այս միակազմ բայական նախադասությունները թեև արտահայտված են անորոշ դերբայով, բայց և այնպես վերաբերում են որևէ դեմքի, մեծ մասամբ դրանք վերաբերում են հենց իրենց խոսողին, ինչպես երևում է, բնագրից:

Սակայն միակազմ բայական նախադասությունները հաճախ ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի կատարումը հատկապես չի վերաբերում որևէ դեմքի, այլ վերաբերում է ընդհանուրին և՝ խոսողին, և՝ խոսակցին, և՝ ուրիշներին: Եթե վերոհիշյալ դեպքերում և երկկազմ նախադասությունների միջև ոճական տարբերությունն է, կարևոր խոսքի սեղմության և կամ այլ պատճառով, ապա այստեղ միտքը անդեմ նախադասությամբ արտահայտելու հարցում կա որոշակի անհրաժեշտություն, այն է՝ գործողությունը հատկապես որևէ դեմքին չվերաբերելու հանգամանքը արտահայտել լեզվական միջոցներով, որի լավագույն միջոցը գործողության արտահայտումն է բայի անդեմ ձևով:

Այսպես, Հր.Աճառյանը, նշելով Հաստենի բարբառում եղող բառի հոգնակիի անկանոնությունը, հարցնում է՝ «Ինչպե՞ս բացատրել այս անկանոնությունը»: Այստեղ բացատրելու գործողությունը արտահայտված է առանց վերագրելու որևէ դեմքի, ընդհանուր ձևով:

Միակազմ բայական անդեմ նախադասությունները հաճախ արտահայտում են խրախուսանք, տենչանք:

Օրինակ՝ Հայացքը հառել ձեղունին՝ նա մի բաղձր արթնություն է, ապրում...Զրնել, չքնել, միայն «նրան» տեսնել արթուն աչքերով, զգալ նրա հմայիչ դեմքի, սլացիկ հասակի, խոր հայացքի վայելքը (Դ.Դ.):

Այսպիսով, հայերենի և անգլերենի անորոշ դերբայների միջև կա որոշակի նմանություն, մինչդեռ իրարից տարբերվում են նրանով, որ հայերենում անորոշ դերբայը չունի դեմք, թիվ, ժամանակ, սեռ, եղանակ, իսկ ինֆինիտիվը ենթարկվում է, ժամանակի և սեռի խստրականությանը և նախադասության մեջ կարող է, հանդես գալ բազմաթիվ խոսքի մասերով, մինչդեռ հայերենի անորոշ դերբայը նախադասության մեջ հանդես է գալիս միայն որպես ենթակա, ստորոգյալ կազմող մաս և լրացում:

Ամփոփում

Դերբայների համեմատությունը անգլերենում և հայերենում:Նրանց նմանությունը և տարբերությունը որակական և քանակական առումով: Ինֆինիտիվի համեմատությունը հայերենի անորոշ դերբայի հետ, նրանց դերը նախադասության մեջ և գործածությունը, որպես տարբեր խոսքի մասեր:

Резюме

Общая характеристика непредикативных форм в английском и армянском языках. Сходство и различие в качественных и количественных понятиях. Сравнение инфинитива с армянском эквивалентом, его роль и употребление в прелложении в качестве различных частей речи.

Գրականություն

1. Ս.Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի բերականություն, Երևան, 1975:
2. Գուրգեն Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:
3. Է.Ռ. Աղայան, Հայոց լեզու, Երևան, 1994:
4. В.Л. Каушанская, A Grammar of the English Language, Ленинград. 1973.
5. T. Drozdova, English Grammar, Санкт-Петербург. 1997.
6. E. M Gordon, I. P. Krylova, A Grammar of Present-Day English.

ԱրՊՀ, անգլերեն լեզվի ամբիոն